

Ծրագրի անվանումը՝ «ԿՈՊԵՐՆԻԿՈՒՄ»
 համակարգի միջոցով Սևծովյան ավազանում
 իրականացվող շրջակա միջավայրի մոնիտորինգ
 Ծրագրի հապավումը՝ ՊՈՆՏՈՍ, BSB-889
 Սկիզբը՝ 01.07.2020
 Ավարտը՝ 31.12.2022
 Բյուջեն՝ 999,967.28 Եվրո
 Համաֆինանսավորում՝ ENI CBC «Սևծովյան
 ավազանի համատեղ գործառնական ծրագիր
 2014-2020»

PONTOS ծրագրի գործընկերը

1. Հայաստանի ամերիկյանի համալսարանի (ՀԱՀ) Յակոբեան բնապահպանական կենտրոն (ղեկավար գործընկեր) | <http://ace.aua.am/>
2. Հելլասի Տեղեկատվական տեխնոլոգիաների ինստիտուտի հետազոտությունների և տեխնոլոգիաների կենտրոն (CERTH-ITI), Հունաստան | <https://www.certh.gr/>
3. Թրակիայի Դեմոկրիտոս համալսարան, Էկոլոգիական ճարտարագիտության և տեխնոլոգիայի լաբորատորիա, Հունաստան | <http://duth.gr/>
4. ՀՀ Բնապահպանության և ընդերքի տեսչական մարմին | <https://www.ecoinspect.am>
5. «Կանաչ այլընտրանք» ՀԿ, Վրաստան | <http://greenalt.org>
6. Օդեսայի Իլյա Մեչնիկովի անվան ազգային համալսարան, Ուկրաինա | <http://onu.edu.ua/en/>



Սևանա լիճ, Հայաստանի պիրոտային տարածք:
 Լուսանկարը՝ «Սևան ազգային պարկ» ՊՈԱԿ



Խմբագիր՝ Հայաստանի
 ամերիկյանի համալսարանի (ՀԱՀ)
 Յակոբեան բնապահպանական
 կենտրոն
 Էլ. հասցե՝ pontos@aua.am
 Կայք՝ pontos-eu.aua.am

AUA ACOPIAN CENTER
 for the ENVIRONMENT



GREEN
 ALTERNATIVE



Սծովյան ավազանի 2014-2020 համատեղ գործառնական ծրագիր
 «ԿՈՊԵՐՆԻԿՈՒՄ» համակարգի միջոցով Սևծովյան ավազանում իրականացվող շրջակա
 միջավայրի մոնիտորինգ՝ PONTOS
 Դեկտեմբեր 2020

Սծովյան ավազանի 2014-2020 համատեղ գործառնական ծրագիրը ֆինանսավորվում է
 Եվրոպական Միության կողմից Եվրոպական հարանության գործիքի միջոցով մասնակից
 երկրների՝ Հայաստանի, Բուլղարիայի, Վրաստանի, Հունաստանի, Սլովակիայի
 Հանրապետության, Ռումինիայի, Թուրքիայի Ուկրաինայի կողմից:

Սույն փաստաթուղթը իրատարակվել է Եվրոպական միության ֆինանսական
 օժանդակությամբ: Այստեղ արտահայտված տեսակետները որևէ կերպ չեն կարող ընկալվել
 որպես Եվրոպական միության պաշտոնական կարծիքի ներկայացում: Սույն ծեռնարկում տեղ
 գտած կարծիքների համար պատասխանատու են հեղինակները, և դրանք պարտադիր չէ, որ
 արտացոլեն Եվրոպական հորիզոնի պաշտոնական ջարդաբանությունը:



Project funded by
 EUROPEAN UNION



Ընդհանուր սահմաններ: Ընդհանուր լուծումներ:



PONTOS

«ԿՈՊԵՐՆԻԿՈՒՄ» համակարգի միջոցով
 Սևծովյան ավազանում իրականացվող
 շրջակա միջավայրի մոնիտորինգ

pontos-eu.aua.am

Ծրագրի մասին

Ծրագրի նպատակն է ամրապնդել անդրսահմանային համագործակցությունը Սևծովյան տարածաշրջանի երկրներում և նրա սահմաններից դուրս՝ լայնածավալ, ներդաշնակ բնապահպանական մոնիտորինգ իրականացնելու համար: Ծրագիրը կօգտագործի «Կոպերնիկոս» համակարգի տվյալներն ու ծառայությունները, կստեղծի առցանց ծառայությունների հարթակ, որը բաց հասանելի կլինի մի շարք տեղական, ազգային և տարածաշրջանային շահառուների համար: «Կոպերնիկոսը» ԵՄ արբանյակային դիտարկման ծրագիրն է: Այն առաջարկում է տեղեկատվական



Կոլխեթի ցածրավանդակներ, Վրաստանի պիլոտային տարածք: Լուսանկարը՝ Չուրա Ջավախիշվիլի

ծառայություններ, որոնք ստացվում են արբանյակային դիտարկման միջոցով և տեղում հավաքված (ոչ տիեզերական) տվյալներից՝ <https://www.copernicus.eu/en>:

Տիեզերքից ստացված առաջնային (օր.՝ նկարներ) և երկրորդային (օր.՝ քարտեզներ) արդյունքները համադրվելու են ոլորտում հավաքագրված առկա տվյալների և գիտելիքների հետ: ՊՈՆՏՈՍ գործառնական հարթակը և ներդրված առցանց ծառայություններ կապահովեն նոր տվյալներին և արդյունքներին բաց հասանելիություն: Տարածաշրջանային մարտահրավերներին դիմակայելու համար

արբանյակային տվյալների և ծառայությունների կիրառմամբ կիրականացվեն թվային քարտեզագրում, աշխարհատեղեկատվական և դաշտային տվյալների հավաքագրում, ուսումնասիրություն և վերլուծություն՝ ընդգրկելով ծովային ու լճային ափամերձ և ցամաքային տարածքները և թիրախավորելով արդյունաբերական, հանգստի, գյուղատնտեսության, ջրային տնտեսության և առևտրի գործունեության ոլորտները Հայաստանում, Վրաստանում, Ուկրաինայում և Հունաստանում: Տեղական շահագրգիռ կողմերը և թիրախային մյուս խմբերը կտեղեկացվեն և կստանան համապատասխան գործիքներ՝ տեղեկատվությանը և դրա պարբերական թարմացումներին հասանելիություն ստանալու համար:



Մեստա գետի դելտայի համայնապատկերային տեսարան, Հունաստանի պիլոտային տարածք: Լուսանկարը՝ Artware

Ծրագրի փորձնական տարածքները

1. Հայաստան - Սևանա լիճը և ջրհավաք ավազանը
2. Վրաստան - Վրաստանի ամբողջ ծովափը և Կոլխեթի ցածրավայրը
3. Հունաստան - Նեստոս գետը, նրա դելտան, դելտային մոտ գտնվող ափամերձ գոտին
4. Ուկրաինա - Օդեսա քաղաքից մինչև Դանուբ գետի դելտան, Դնեստր գետի դելտայի տարածքը և հարակից գետաբերանի լողափերը, հանգստի գոտիները

Ակնկալվող արդյունքներ

1. Առցանց ծառայությունների գործիքակազմի ինտեգրում՝ Սև ծովի և նրա հարակից միջավայրի համար արդյունավետ մոնիտորինգ իրականացնելու համար:
2. Սևծովյան ավազանի վերաբերյալ միջսահմանային բնապահպանական մոնիտորինգի համապատասխան տվյալների և տեղեկատվության մատչելիության ու արդիականության ապահովում:
3. Կարողությունների զարգացման և միատարրության ապահովում Սևծովյան ավազանի և հարակից միջավայրի համար՝ հատուկ մշակված թիրախային ուսումնական նյութերի և



Դնեստրի տեսարան, Տրոիցկոյե գյուղի մոտակայքում, Ուկրաինայի պիլոտային տարածք: Լուսանկարը՝ EU-TACIS Lower Dniester Project

գործողությունների միջոցով:

4. Անդրազգային և միջառարկայական համագործակցող թիմի ստեղծում, որը կհամախմբի տեղական ճկուն մասնագիտական խմբերին, որոնք իրենց հերթին կներգրավեն «PONTOS» ծրագրի կողմից առաջարկվող մեթոդաբանության և գործիքների միջոցով տվյալների փոխանակմանը նպաստող շահագրգիռ խմբերի:
5. Տեղական և ազգային կայուն զարգացման համար ջրի որակի դեգրադացիայի կարևորության մասին իրազեկության բարձրացում: